Աշխատանքի ծածկագիր 4567

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 25.11.2021թ.

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Գ.Հարությունյանի
մասնակցությամբ անդամներ՝
Տ.Մարկոսյանի
Լ.Գրիգորյանի

Քննության առնելով քաղաքացիական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Տ

Բողոքարկվել են քաղաքացիական դատավարություն բաժնի 1-ին, 12-րդ և 27-րդ հարցերը:

Քաղաքացիական դատավարության բաժին

Հարց 1

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 186-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հաշտության համաձայնություն կնքելու դեպքում մեկական օրինակ տրվում է կողմերին, հաշտարարին, դատարանին: Հետևաբար, ելնելով կոնկրետ դեպքում կողմերի քանակից, տրված պատասխանը ճիշտ է: Ինչ վերաբերում է իրավասու մարմնի հնարավոր հաշվարկով ևս մեկ օրինակ նախատեսելու հանգամանքին, ապա նախ այդպիսի մոտեցումը չի բխում քաղաքացիական դատավարության օրենսդրությունից, քանի որ իրավասու մարմինը չի հանդիսանում դատավարության կողմ: Բացի այդ, պարզ չէ այդ մարմնին հաշտության համաձայնության օրինակը տրամադրելու նպատակը: Մյուս կողմից, կոնկրետ դեպքում 5 օրինակ նախատեսելը, եթե որևէ կերպ անհրաժեշտ էր նաև իրավասու մարմնին ևս մեկ օրինակ տալ, վիճելի է, քանի որ այն դեպքում, երբ կողմերը հաշվառված լինեն տարբեր վարչատարածքային միավորների տարածքում, իրավասու մարմինների քանակը կլինի երկուսը և ըստ այդմ ճիշտ պատասխան կարող էր լինել հաշտության համաձայնությունների 6 օրինակը:

Հարց 12

Ընտրված պատասխանը ճիշտ չէ, որը հիմնավորվում է հենց բողոքաբերի փաստարկներով, մասնավորապես՝ ընտրված պատասխանում բացակայում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 350-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում առկա «եթե այդպիսի լիազորություն նախատեսված է օրենքով կամ միջազգային պայմանագրերով» ձևակերպումը:

Հարց 27

Բողոքաբերի փաստարկը անհիմն է, քանի որ, չնայած տեքստում տեխնիկական վրիպակի առկայությանը, ակնհայտ է, թե որտեղ է ավարտվում հարցադրումը և դրա վերաբերյալ ներկայացված տարբերակները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 105.1-րդ հոդվածով, ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդի՝ 2021 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԲԴԽ-73-Ո-175 որոշմամբ հաստատված թիվ 4 հավելվածի 29-րդ կետով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 4567 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակի՝ քաղաքացիական դատավարություն բաժնի 1-ին հարցին տրված պատասխանը համարել ճիշտ, իսկ բողոքը մնացած մասով մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Տ.ՄԱՐԿՈՍՅԱՆ

Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ